

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԹԱՄԱՐԱ ՊԵՐԵ

**ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՖԻԼՄԵՐԻ  
ՄԻՋՈՑՈՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ՃԳ. 00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»  
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների  
դոկտոր Ի. Կ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների  
դոկտոր Բ.Ս. Եսաջանյան  
Մանկավարժական գիտությունների  
թեկնածու Մ. Ա. Ղարաբյան

Առաջատար կազմակերպություն՝

Հովի. Թումանյանի անվան Վանաձորի  
պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. սեպտեմբերի 25-ին ժամը 12<sup>00</sup>-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՆ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. օգոստոսի 25 - ին:

**Մասնագիտական խորհրդի**

**գիտական քարտուղար,**

**մանկավարժական գիտ. թեկնածու՝**

**Ա. Յ. Սվաջյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Արդի փուլում օրեցօր մեծանում է տեխնիկական միջոցների կիրառման դերը մասնագիտական անգլերենի ուսուցման գործընթացում: Դատկանշական է այն, որ ուսուցման տեխնիկական միջոցների կիրառումը թե՛ դպրոցում, թե՛ բուհում համակարգված չի եղել: Ինչպես ցույց է տալիս փորձը, ՀՀ-ում հիմնականում օգտագործում են լսաերիզմեր, որոնք արտերկորում ստեղծված ուսումնամեթոդական համալիրների մեջ են նտնում:

Ֆիլմերը, ինչպես ցույց է տալիս փորձը, հիմնականում ընտրվում են ըստ դասախոսների կամ ուսանողների հայեցողության: Շատ դեպքերում ֆիլմի դիտումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ այն հնարավոր է: Ուսումնական կամ գեղարվեստական ֆիլմերի դիտումը չի իրականացվում ըստ նախօրոք մշակված ժամանակացույցի: Շրջանառվող ծրագրերում հիմնավորված չէ ուսումնական նպատակներով ֆիլմերի դիտման անհրաժեշտությունը:

Օտար լեզուների ֆակուլտետում անգլերենի մասնագիտական դասընթացը նախագծելիս և իրականացնելիս չի անցկացվում ուսանողների ինացական, մասնագիտական, գեղագիտական և այլ բնույթի պահանջնունքների վերլուծություն, հաշվի չի առնվում ֆիլմերի թեմատիկան, նրանց գեղարվեստական, լեզվաոճային, գործաբանական բնութագրերը, մատչելիության սկզբունքի տեսանկյունից ուսանողների ընկալման, հասկանալու, վերարտադրելու ունակությունները և այլն: Կարելի է պնդել, որ ուսուցողական նպատակներով ֆիլմերի ընտրությունը և դրանց միջոցով անգլերեն լեզվի որևէ ասպեկտի ուսուցումը կատարվում է հիմնականում առանց հստակ մշակված մեթոդական համակարգի: Ուսուցողական նպատակներով ֆիլմերի ընտրությունը իրականացվում է տարերայնորեն, ըստ ուսանողների կամ դասախոսի հայեցողության:

Ինչ վերաբերում է ցուցադրվող ֆիլմի շուրջ տարկող աշխատանքին, ֆիլմում պարունակվող քերականական, հնչյունական, բառային նյութի յուրացմանը միտված ընթացակարգերին, ապա դրանց մշակումը կարևորվում է հատկապես ուսանողների հաղորդակցական իրազեկության զարգացման տեսանկյունից:

Գեղարվեստական ֆիլմը՝ որպես մեդիատեքստի տեսակ հնարավորություն է տալիս արագ և արդյունավետ ձևով ուսումնասիրել տվյալ լեզուն, յուրացնել ոչ միայն նրա խոսքային, այլև ոչ խոսքային կաղապարները:

Դնարավոր չէ օգտագործել ֆիլմն ուսումնական նպատակներով, առանց հաշվի առնելու նրա՝ որպես մեդիատեքստի, բովանդակային և գործառական բնութագրերը: Ընդհանրապես՝ մանկավարժության, մասնավորապես՝ մեդիամանկավարժության, կինոկրթության շրջանակներում գոյություն ունեն հարուստ ավանդույթներ

ուսումնական նպատակներով գեղարվեստական և այլ ժանրի ֆիլմերի կիրառելու գործում:

Ընդհանուր մանկավարժության և օտար լեզուների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ գիտնականները մեծ ուշադրություն են դարձրել ուսուցողական նպատակներով ֆիլմերի կիրառմանը՝ թե՛ դպրոցում, թե՛ բուհում: Կարելի է առանձնացնել Ա. Ն. Գավրիչենկովի (Ա. Հ. Գավրիչենկո 1995), Վ. Պ. Գերասիմով (1986), Յու. Ե. Շաբալինի (Յ. Շաբալին 2000) և այլոց ատենախոսությունները:

Տեսալսողական կամ տեսառնկղողական միջոցների կիրառումը կարևորվում է ոչ միայն մանկավարժների և մեթոդիստների՝ Մ. Գ. Աստվածատրյան (1985), Ս. Պ. Ասատրյան (2006), Կ. Ա. Չայրյան (1990), Ի. Կ. Կարապետյան (2007), այլև հիգեբանների կողմից՝ Ս. Զ. Արզումանյան (2003), Ա. Նալչաջյան (1984), Կ. Ոսկանյան (2001), Ի. Ա. Զիմնյա (2004), Ա. Ա. Լեոնտյև (1974), Ա. Հ. Լեոնտյև (1977) և այլոք:

Ատենախոսության հիմնախնդրի տեսանկյունից կարևորվում են Ե. Վ. Գլուշակի (Ե. Վ. Գլուշակ 2001), Յու. Ա. Կոմարովի (Յ. Ա. Կոմարով 2006), Վ. Ի. Պիսարենկոյի (Վ. Ի. Պիսարենկո 2001), Վ. Ս. Տարանովի (Վ. Տարանով 1965), Ա. Վ. Շադրինի (Ա. Վ. Շադրին 1990), Վ. Ս. Շեվչենկոյի (Վ. Ս. Շեվչենկո 1954), Մ. Լեյվերի (M. Lavery 1996), Ռ. Քուփերի (R. Cooper 1996) աշխատանքները :

Մեծ թիվ են կազմում ունկնդրման ուսուցման նպատակով բնագրային գեղարվեստական ֆիլմերի կիրառմանը նվիրված աշխատանքները (Հ. Պ. Կովալյով 1977). Լ. Ի. Իվանովայի հետազոտությունը վերաբերում է տեխնիկական միջոցներով ուսումնական մեթոդիկայի մշակմանը (Լ. Ի. Իվանովա 2003), Լ. Ա. Իգնատովսկայան ուսումնասիրել է տեսալսողական տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրը ուսանողների անհատական աշխատանքի կազմակերպման գործում (Լ. Ա. Իգնատովսկայան 2003):

Բնագրային ֆիլմերի միջոցով օտար լեզվի ուսուցումը ենթադրում է նորագույն տեխնիկական միջոցների կիրառում, մասնավորապես՝ բազմաթիվ լրատվական միջոցների կիրառում (Կլեմեշովա 2002; Սարա 2003; Եօվտենկո 2005; Բալыхина 2006 և այլոք):

Չամապատասխան հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ անգլալեզու ֆիլմերի դիտումն ուսումնական գործընթացում արդյունավետ չի կարող լինել, եթե ուսանողները ծանոթ չեն տեքստի լայն իմաստով, մեղիատեքստի, գեղարվեստական տեքստի, խոսույթի և մեղիախոսույթի վերլուծության նախնական կամ տարրական սկզբունքների հետ:

Կարևոր է նշել, որ նախաֆիլմային և հետֆիլմային աշխատանքը՝ վերլուծությունը, քննարկումները, վերարտադրումը, նրա բանավոր և գրավոր ներկայացումը հիմք են ստեղծում ուսանողների ակտիվ, ստեղծագործական աշխատանքի համար:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ** Է՝ ուսումնասիրել բնագրային ֆիլմերի միջոցով օտար լեզուներ ուսումնասիրելու ժամանակակից մանկավարժական և լեզվադիդակտիկական տեխնոլոգիաները և ռազմավարությունները, մշակել օտար լեզուների ֆակուլտետում ուսանողների լեզվամշակութային իրազեկություն զարգացնող մեթոդական համակարգ:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ** հաղորդակցական իրազեկության զարգացումն է մասնագիտական անգլերենի դասընթացում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ** բնագրային ֆիլմերի միջոցով օտար լեզուների ֆակուլտետի ուսանողների լեզվամշակութային իրազեկության զարգացման մեթոդական համակարգն է:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ.**

• Ուսումնասիրել բնագրային ֆիլմերի միջոցով օտար լեզուների ուսուցման ուսումնամեթոդական գրականություն:

• Ներկայացնել լեզվամշակութային իրազեկության բովանդակային և գործառական բնութագրերը՝ հաշվի առնելով օտար լեզուների ֆակուլտետում լեզվի ուսուցման մակարդակները և ուսանողների մասնագիտական և իմացական պահանջմունքները:

• Բացահայտել բնագրային ֆիլմերի միջոցով օտար լեզուների ուսուցման ընթացքում հնչյունական, բառային փոխներթափանցման կանխման և հաղթահարման առանձնահատկությունները :

• Ստեղծել բնագրային ֆիլմերի միջոցով լեզվամշակութային իրազեկության զարգացման մեթոդական համակարգ:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ.**

Եթե լեզվանյութի տարրեր հայեցակերպերի ուսուցման գործընթացում կիրառում ենք անգլալեզու բնագրային/գեղարվեստական ֆիլմերի ընտրության հաղորդակցական, հաղորդակցական-ճանաչողական մոտեցումներով հիմնավորված սկզբունքներ, մեթոդներ և հնարներ, ստեղծում ենք ֆիլմի հետ աշխատելու մեթոդական կաղապար, մշակում ենք համապատասխան նախաֆիլմային, ֆիլմային, հետֆիլմային վարժությունների համակարգ, ապա

1. ավելի արդյունավետ է դառնում քերականական, բառային, հնչյունական, ինչպես նաև մշակութային, միջնշակութային փոխներթափանցման հաղթահարման գործընթացը,

2. բնագրային ֆիլմերի ուսուցողական նպատակներով դիտումը դառնում է ծրագրվող մոդուլների անբաժանելի մասը,
3. նոր մեթոդական հիմքերի վրա է դրվում ժամանակակից անգլերենի խոսակցական բառապաշարի և հաղորդակցական քերականության ուսուցման և յուրացման ռազմավարությունները և ընթացակարգերը,
4. ավելի նպատակային, դինամիկ է դառնում ուսանողների լեզվամշակութային իրազեկության ձևավորման և զարգացման գործընթացը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄքՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆ ՕՍՈԱՐ ԼԵզվուների դասավանդման մեթոդաբանության (Մ. Գ. Աստվածատրյան (1985), Բ. Մ. Եսաջանյան (2001), Ի. Կ. Կարապետյան (2007), Ի.Լ. Բիմ (1977), Ի.Ա. Զիմնյա (2004), Բ.Ա. Լապիդս (1979), Ռ.Պ. Միլյրուդ (2002), Ա.Ա. Միրոլյոբով (2005), Ե.Ի. Պասսօվ (1989), Ե.Ը. Պոլատ (1998), Ը.Կ. Փոլոմկինա (1950), Կ. Morrow (1981), D. Nunan (1988), H.D. Brown (1978) և այլոք), մշակույթների երկխոսության (Մ.Լ. Վայսբորդ 1984), Հ.Դ. Գալյսկովա 1991), Ե.Հ. Սоловովա (2003), Վ.Վ. Սաֆոնովա (1999), Ի.Ի. Խալեևա (1989), H. Widdowson (1984) և այլոք), տարբեր նշանային համակարգերի փոխներթափանցման, առաջնային, երկրորդային լեզվական անձի ձևավորման, լեզվամշակութային, միջմշակութային, գործաբանական իրազեկության ձևավորման (Ը.Շ. Տեր-Մինասովա(2000), Վ.Վ. Սաֆոնովա(1999), Յ.Բ. Կուզմենկովա (2000), Պ.Վ. Ծիսոև (2003), M. Hammer (1989), H.G. Widdowson(1984)), տեսալսողական հաղորդակցության հոգեբանական հիմքերի և դրդապատճառների խթանման (Բ.Գ. Անանյև(1980), Լ.Ը. Վյոցտսկի (1996), Ը.Լ. Ռուբինշտեյն (1957), Ա.Ն. Լեոնտյև (1977), Ա.Ա. Լեոնտյև (1974), Ի.Ա. Զիմնյա (2004)), տեսալսողական նյութերի ուսուցողական նպատակներով կիրառման (Օ.Ի. Բարմենկովա(1987), Ի.Ա. Գոնչար (1996), Գ.Գ. Ժօգլինա (1998), Օ.Վ. Կոչուկովա (2004), Ի.Ա. Щերբակովա (1984), M. Allen (1983), C.J. Bramfit (1979), Buckingham, R. Cooper(1996) , J. Fiske (1987), J. Golden (2001), M. Lavery (1981), J. Lonergan (1984), S. Stempleski & B. Tomalin (1993), E.Summerfield (1993), P. Viney(2000), J.A. Willis (1996), D. Willis (1983) և այլոք) մեթոդաբանական հայեցակարգերը և մեթոդական մոտեցումները:**

#### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.**

- թեմային առնչվող լեզվաբանական, հոգելեզվաբանական, դիդակտիկական և մեթոդական գրականության վերլուծություն,
- ուսուցողական նպատակներով կիրառվող տեխնիկական, հեռահաղորդակցական, տեսալսողական միջոցների ուսումնասիրություն,

- ուսումնական /աղապտացված/, բնագրային ֆիլմերի հոգեբանական ներգործության, ուսուցողական ներուժի ուսումնասիրություն, բովանդակային և գործառական բնութագրերի բացահայտում,

- ուսուցողական նպատակներով բնագրային /գեղարվեստական/ ֆիլմերի հետ աշխատանքի ընթացակարգերի մշակում, տեսալսողական միջոցներով օտարալեզու բառապաշարի, քերականական խոսակցական կաղապարների, ունկնդրման լսարանային և արտալսարանային աշխատանքի կաղապարում,

- բնագրային ֆիլմերի հետ աշխատանքի կաղապարի արդյունավետությունը հաստատող կամ ժխտող գիտափորձ,

- բնագրային ֆիլմերի հետ աշխատանքի մեթոդական համակարգի փորձարարական ստուգում և հիմնավորում:

### ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԱՅՆ Է, ՈՐ

1. բացահայտվել են լեզվամշակութային կոմպետենցիայի ձևավորման առանձնահատկություններն ուսումնական և արտառուսումնական պայմաններում բնագրային ֆիլմերի կիրառման միջոցով,
2. մշակվել է օտարալեզու բնագրային ֆիլմերի դիտման մշակույթի ձևավորման, դրանցում պարունակող խոսքային կաղապարների յուրացման, խոսքային կարողությունների զարգացման մեթոդական համակարգ,
3. դիտարկվել է լեզվամշակութային կոմպետենցիայի ձևավորումը որպես հաղորդակցական կոմպետենցիայի էական բաղադրամաս և փորձարարական ուսուցման արդյունքների ընթացիք և ավարտական ստուգմամբ հաստատվել է առաջարկվող մոդելի արդյունավետությունը,
4. մշակվել է բնագրային ֆիլմերի միջոցով բառային, քերականական, հնչյունական, ինչպես նաև մշակութային-գործաբանական փոխներթափանցման ռազմավարությունը, որը կարևոր պայման է դառնում ուսանողների լեզվամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման համար:

### ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

- ուսումնասիրվել են տեխնիկական, հեռահաղորդակցական միջոցները արդյունավետ կիրառելու ժամանակակից մեթոդական մոտեցումները,
- բացահայտվել են բնագրային՝ հիմնականում գեղարվեստական ֆիլմերի ուսուցողական նպատակներով կիրառելու առանձնահատկությունները,
- կոնկրետացվել են բնագրային ֆիլմերի լեզվի ոճական առանձնահատկությունները բացահայտելու ընթացակարգերը, հիմնավորվել

Են բնագրային ֆիլմերն ընկալելու և ակտիվ խոսքում գործածելու նպատակով ընտրվող նվազագույն բառապաշարի ընտրության սկզբունքները,

• ստեղծվել է ըստ փուլերի բնագրային ֆիլմերի միջոցով լեզվամշակութային իրազեկության ձևավորման և զարգացման վարժությունների համակարգ, որը միտված է ազգամշակութային նշույթավորում ունեցող բառապաշարի ուսուցմանը և յուրացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. մշակվել է ուսանողների կողմից բնագրային ֆիլմերի ոիտումը կազմակերպելու միջոցով լեզվամշակութային իրազեկություն զարգացնող մեթոդական համակարգ, որը ներկայացնում է նախաֆիլմային, ֆիլմային, հետֆիլմային վարժությունների ընտրության և դրանք տարբեր տեսական և գործնական դասընթացներում կիրառելու տեխնոլոգիաներ: Օտարակեզու ֆիլմերի միջոցով ազգամշակութային նշույթավորում ունեցող բառապաշարի հետ աշխատանքի մեթոդական կաղապարը կարող է նպաստել անգլերենի տեսական և գործնական դասընթացների կազմակերպմանը, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների ստեղծմանը, ծրագրերի, պլանների կազմելուն և կոնկրետ դասերի անցկացմանը:

#### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ.

Հետազոտությունը իրականացվել է հիմք տարվա ընթացքում հետևյալ փուլերով.

Առաջին փուլում (2008-2009) ըստ հետազոտության թեմայի, առարկայի և խնդիրների հավաքվել և ուսումնասիրվել են մանկավարժական, լեզվաբանական գիտամեթոդական գրականությունը: Հստակեցվել են հետազոտության հիմնական հասկացությունները և կարգերը, ինչպես նաև փորձարարական ուսուցման փուլերը, ֆիլմերի, առաջադրանքների, վարժությունների ընտրության սկզբունքները:

Երկրորդ փուլում (2009-2010) առաջադրվել է հետազոտության նախնական վարկածը, կոնկրետացվել են փորձարարական ուսուցման փուլերը, ֆիլմերի միջոցով անգլերենի ուսուցման տեխնոլոգիաները և ընթացակարգերը:

Երրորդ փուլում (2010-2011) ավարտվել է փորձարարական ուսուցումը, մշակվել է անգլերեն բնագրային ֆիլմերի միջոցով ուսանողների լեզվամշակութային իրազեկությունը զարգացնող համապատասխան վարժությունների համակարգ:

Այդ փուլում ընդհանրացվել են հետազոտության արդյունքները և հիմնավորվել են հետազոտության հիմնական դրույթները:

#### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.

1. Բնագրային ֆիլմերը ներկայացնում են լեզվակիրներին բնորոշ հաղորդակցական կաղապարներ՝ ձևերը, միջոցները, տվյալ հանրության

կողմից ընդունված մոտեցումները, որոնք ընկած են նրանց հանրալեզվաբանական և լեզվամշակութային իրազեկության հիմքում:

2. Ինչքան շատ է ուսուցողական նպատակներով ցուցադրվող ֆիլմը հագեցած մշակութային իրողություններով, այնքան արոյունավետ կարող է լինել ուսումնական նպատակներով նրա կիրառումը: Լեզվամշակութային իրազեկության ձևավորումը բնագրային գեղարվեստական ֆիլմերի միջոցով առավել մեծ կարևորություն է ստանում, քանի որ օտար լեզվի տիրապետումը՝ որպես միջմշակութային հաղորդակցման միջոց, կատարվում է ոչ բնական լեզվական պայմաններում:

3. Բնագրային ֆիլմերի միջոցով անգլերենի ուսուցման նախագծումը, պլանավորումը օգնում է ուսանողներին ներգրավել ուսումնահմացական հաղորդակցական գործունեության մեջ, որը փաստորեն արտացոլում է ոչ միայն բնագրային ֆիլմերի հետ աշխատելու տեխնոլոգիաները, այլև օտար լեզվով շփման ձևավորման մեթոդներն ու հնարները:

4. Ուսուցողական նպատակներով բնագրային ֆիլմերի կիրառումը նպաստում է մշակութային, միջմշակութային, գործաբանական բնույթի սխալների բացահայտմանը, կանխարգելմանը և հաղթահարմանը:

<u>ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ</u>	<u>ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ</u>	<u>ՀԱՎԱՍՏԻՌՈՒՅՈՒՆՆԵՐ</u>	<u>ՈՒ</u>
----------------------	---------------------	--------------------------	-----------

ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ապահովվում է հետազոտությամբ հիմնավորված դրույթներով, հետազոտության մեթոդաբանական հիմքերի բացահայտմամբ, ինչպես նաև տեսական և գործնական մակարդակների կապի պահպանմամբ: Հետազոտության արդյունքների շարունակական ճշգրտումը և կոնկրետացումը հաստատում է նախնական վարկածը, հետազոտության օբյեկտի և առարկայի տրամաբանական կապը, մշակած մեթոդական համակարգի արդյունավետությունը և հետազոտության արդյունքների հուսալիությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ.

Հետազոտության արդյունքները ներդրվել են Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում:

Ասենախոսության հիմնական դրույթները արտացոլված են չորս հոդվածում (տես՝ անվանացանկը ատենախոսության սեղմագրի վերջում):

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՎԱՆՆՈՒԹՅՈՒՆԸ.

Հետազոտության արդյունքները գեկուցվել ու հավանության են արժանացել ՀՊՄՀ-ի անգլերենի և նրա դասավանդման մեթոդիկայի, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ընդհանուր մանկավարժության ամբիոնների համատեղ նիստերում,

Գյումրու Ս. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի անգլերենի և գերմաներենի ամբիոններում:

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, գծապատկերներից, այլուսակներից, բնագիր տեքստերից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը 144 համակարգչային էջ է:

Աշխատանքի ներածական մասում հիմնավորել ենք հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Հետազոտության առաջին՝ «Մեդիատեքստի վերլուծության առանձնահատկություններն անգլերենի մասնագիտական դասընթացում» գլխում քննարկվում են լեզվամշակութային իրազեկության ձևավորման առանձնահատկությունները անգլերենի մասնագիտական դասընթացում: Սույն գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Օտար լեզուների ուսուցման տեխնիկական, տեսալսողական միջոցների կիրառումն անգլերենի մասնագիտական դասընթացում» ենթագլուխը ներկայացնում է ուսուցման տեխնիկական միջոցների արդյունավետ կիրառման առանձնահատկությունները օտար լեզուների դասավանդման գործընթացում, ֆիլմերի միջոցով օտար լեզուների ուսուցման պատմական ակնարկ, ուսուցման տեխնիկական միջոցների հիմնական տեսակները, տեսալսողական միջոցները, մեթոդական տեսանկյունից ուսուցման տեխնիկական միջոցների կիրառման առավելությունները, լինգվաֆոնային լսարանների կիրառման նպատակներն ու տեսակները արդի փուլում, դրանց փոխարինման գործընթացը համակարգչային լսարաններով:

Երկրորդ՝ «Անգլերեն բնագրային ֆիլմերի դիտումը որպես ուսանողների լեզվամշակութային իրազեկության զարգացման միջոց» ենթագլուխը քննարկվում են հանրալեզվաբանական գիտելիքների յուրացման տեսանկյունից բնագրային ֆիլմերի կիրառման հնարավորությունները, մանկավարժական պայմանները, լեզվամշակութային իրազեկության հիմնական բաղադրամասերը, հաղորդակցական իրազեկության բովանդակությունը, բնագրային ֆիլմերի միջոցով լեզվամշակութային իրազեկության ձևավորման հիմնական նախադրյալները:

Նշվում է, որ ՀՀ-ի լեզվական-լեզվաբանական ուղղվածության բուհերն ունեն ուսանողների լեզվամշակութային իրազեկության ձևավորման և զարգացման որոշակի

փորձ, սակայն միայնախորդ դարի վերջին քառորդում մեթոդիստները սկսեցին հստակորեն տարագատել լեզվամշակութային իրազեկության հիմնական բաղադրամասերը: Դրա արդյունքում ձևավորվեցին և զարգացան բազում մոտեցումներ և հայեցակարգեր: Յիմնավորվում է այն դրույթը, ըստ որի՝ առանց լեզվամշակութային իրազեկության ձևավորման հնարավոր չէ իրականացնել միջմշակութային հաղորդակցություն, զարգացնել սովորողների հաղորդակցական կարողունակություն-ները:

Արդի փուլում օտար լեզուների ուսումնասիրման հիմնական նպատակներից մեկը հաղորդակցական իրազեկության զարգացումն է, իսկ բնագրային ֆիլմերը պարունակում են պատրաստի հաղորդակցական լեզվական և վարքագծային կաղապարներ, որոնց յուրացման համար դասավանդողը պետք է կարողանա օգտվել տեղեկատվական, հեռահաղորդակցական, ընդհանուր առմամբ նորագույն թվային և այլ տեխնիկական միջոցներից, կարողանա դասի ընթացքում կիրառել տարբեր ակտիվ, ինտերակտիվ մանկավարժական մեթոդներ և հնարներ:

Կարևորվում է նաև բնագրային ֆիլմերի միջոցով բառային, քերականական, մշակութային, միջմշակութային, գործարանական և խոսութային բնույթի սխալների կանխման և հաղթահարման ռազմավարությունների կիրառումը:

Ուսումնասիրելով օտար լեզուների դասավանդման փորձը՝ ընդհանուր գծերով ուրվագծվում են բնագրային ֆիլմերի հետ աշխատանքի հիմնական փուլերը.

1. ընկալողական / նախապատրաստական/
2. արտադրողական / ինքնաբերական/
3. ինտերակտիվ / մենախոսական, երկխոսական/
4. մեղիատիվ / լեզվաբանական, ոճաբանական, նախաթարգմանական,

խոսութային վերլուծություն, բարգմանություն/:

Ընկալողական մակարդակում կարևորվում է ենթագրերի, սկրիպտների, ֆիլմերի բնագրերի ընթերցումը և ֆիլմում հնչող խոսքի ունկնդրումը:

Արտադրողական մակարդակում մեծ տեղ է հատկացվում ֆիլմի միջոցով ուսանողների բանավոր և գործառ խոսքի զարգացմանը:

Ինտերակտիվ փուլում ուսանողները վերարտադրում են ֆիլմի հերոսների մենախոսական և երկխոսական խոսքը:

Մեղիատիվ մակարդակում ուսանողները իրականացնում են լեզվաբանական, բանասիրական, նախաթարգմանական, խոսութային վերլուծություն:

Ուսումնասիրության մեջ առաջին պլան է մղվում բնագրային ֆիլմերի միջոցով իմաստային, խոսութային և գործարանական նշույթների յուրացումը: Նշվում է, որ այդ

Աշույթներով իրականացվում է ֆատիկ հաղորդակցություն: Ֆիլմերի հետ աշխատանքի ընթացքում ուսանողները կարող են հետևել, թե ինչպես են լեզվակիրները ոչ միայն խոսում, այլև լռում, խոսքին դադար տալիս, ընդմիջում՝ կիրառելով տարբեր արտալեզվաբանական և հարալեզվական միջոցներ: Տեսաֆիլմերի դիտումը օգնում է ուսանողներին հասկանալ և ընդունել, որ միայն քերականական կանոնների, բառային, հնչյունային միավորների իմացությամբ և կիրառմամբ հնարավոր չէ հաղորդակցվել օտար լեզվով:

Շեշտադրվում է այն գաղափարը, ըստ որի՝ ուսանողների լեզվամշակութային իրազեկության զարգացումը ենթադրում է ուսումնական պայմաններում երկրորդային, երրորդային լեզվական անձի ծևավորման գործընթաց:

Բացահայտվում են բնագրային ֆիլմերի հիմնական գործառույթները՝ առ այն, որ դրանք ներկայացնում են լեզվակիրներին բնորոշ հաղորդակցական կաղապարները՝ ձևերը, միջոցները, տվյալ հանրության կողմից ընդունված մոտեցումները և կատարում են դաստիարակչական, կրթական, գեղագիտական և այլ գործառույթներ: Առանձնացվում են նաև բնագրային ֆիլմերի հետևյալ գործառույթները. դրանք ներկայացնում և վերարտադրում են լեզվակիրների ազգամշակութային իրողությունները և իրարկությունները, համամարդկային և հանրամշակութային արժեքները, թիրախ լեզվակիրների ավանդույթները, սովորույթները, ընդհանրապես՝ մտածելակերպը:

Խնդրո առարկայի տեսանկյունից շեշտադրվում է հանրալեզվաբանական իրազեկության սահմանումը, քանի որ այն ենթադրում է հաղորդակցվողի կողմից ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային հաղորդակցման միավորների տիրապետում, ինչպես նաև դրանք ընտրելու և կիրառելու կարողություն:

Երրորդ՝ «Բնագրային ֆիլմի բովանդակային և գործառական բնութագրերը» ենթագլխում քննարկվում են բնագրային ֆիլմերն ուսուցողական նպատակներով կիրառելու արդյունավետ ձևերը, բնագրային տեսանյութերի հետ աշխատելու տարբեր մեթոդներ և հնարներ, իրական տեսանյութերի հիմնական գործառույթները, տեսանյութերի ընտրության հիմնական չափանիշները, ֆիլմի՝ որպես մեդիատեքստի, վերլուծության առանձնահատկությունները:

Վերլուծվում է «գործաբանական նյութեր» տերմինը, հաշվի առնելով այն փաստը, որ իրական, չաղապտացված ֆիլմերը գործաբանական նյութերի հարուստ աղբյուր են:

Նշվում է, որ հնարավոր չէ բնագրային ֆիլմերն արդյունավետորեն կիրառել ուսումնական գործընթացում, եթե ուսանողները ծանոթ չեն հաղորդակցական մոտեցման հիմնական սկզբունքների հետ, քանի որ մեդիատեքստի վերլուծությունը

բխում է ուսանողների ուսումնական, գիտական, մասնագիտական, գեղագիտական և այլ բնույթի պահանջմունքներից:

Կարևոր դրույթ է այն, որ պասիվ լսարանը չի կարող հասկանալ մեղիատեքստը: Այստեղից հետևում է, որ նախաֆիլմային և հետֆիլմային աշխատանքը՝ վերլուծությունը, քննարկումները, վերարտադրումը, նրա բանավոր և գրավոր ներկայացումը հիմք են ստեղծում ուսանողների ակտիվ, ստեղծագործական աշխատանքի համար:

Երկրորդ՝ «Բնագրային ֆիլմերի միջոցով լեզվանյութի ուսուցման կաղապարը և դրա փորձարարական հիմնավորումը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Սույն գլխում բացահայտվում է բնագրային ֆիլմերի միջոցով խոսակցական բառապաշտի և հաղորդակցական քերականության ուսուցման արդյունավետությունը, ինչպես նաև հստակեցվում է ֆիլմի՝ որպես խոսույթի, վերլուծության առանձնահատկությունները իմաստաբանական, գործաբանական և նշանաբանական մակարդակներում:

Գեղարվեստական ֆիլմերը մեծ դեր են կատարում առօրյա-խոսակցական արտահայտությունների և հաղորդակցական քերականական կառույցների ուսուցման գործում, քանի որ ֆիլմերում կարելի է հանդիպել այնպիսի խոսակցական արտահայտությունների, որոնք անգամ անգլախոս երկրներում տպագրվող դասագրքերում հազվադեպ են հանդիպում: Անգլերենի խոսակցական բառապաշտի ուսուցման գործընթացը ենթադրում է հաշվի առնել ոչ միայն տեղեկատվական շիման, այլև ոչ տեղեկատվական շիման /խոսքարկման կամ ֆատիկ շիման/ առանձնահատկությունները: Բացահայտվում են խոսքարկող հաղորդակցության հիմնական բնութագրերը, առ այն, որ անգլերենի խոսակցական բառապաշտի կարևորագույն հատկանիշներից են կրկնությունները, ներմուծվող տարրերը, մակաբույժ բառերը՝ (well, yeah, come on, you see), ինչպես նաև գերիուզականությունը:

Կարևորվում է անգլերենի խոսակցական բառապաշտի կիրառման ֆատիկ ռազմավարության տեսանկյունից հաղորդակցության մեջ մտնելու, հակադարձ կապի և հաղորդակցության ավարտի ապահովման նշույթների յուրացման ռազմավարություն մշակելը:

Հիմնավորվում է այն դրույթը, ըստ որի՝ հաղորդակցական քերականական կառույցները, նմուշները բացահայտվում և իմաստավորվում են հատկապես խոսույթի հուզական, տեղեկատվական և հասկացական մակարդակներում: Այս պարագայուն խոսույթ է ֆիլմի բովանդակությունն ամբողջությամբ, և դրա վերլուծությունը ուսանողների կողմից յուրահատուկ մեթախոսույթի դրսերում է: Դա նշանակում է, որ

տվյալ լեզվանյութի ուսուցումն իրականացվում է ոչ թե կոնկրետ արտահայտության կամ արտահայտությունների, այլ խոսութի մակարդակում:

Սույն գլխում ցույց է տրվում, որ բավականին դժվար է օտարալեզու բանավոր շփում իրականացնելու համար լեզվակիրներին բնորոշ լրության, դադարների, դադարներին փոխարինող նշույթների իմաստը հասկանալը: Ֆիլմում հնչող անգլալեզու մարդկանց բանավոր խոսքը հնչ-որ առումով հաղորդակցական բացերի լրացման գործընթաց է: Օտարալեզու խոսքին բնորոշ են բազում խոսքային դադարներ, որոնք իմաստավորվում են հարալեզվական միջոցների կիրառմամբ: Նույն համատեքստում ֆիլմերը հարուստ աղբյուր են նախադասության շեշտը, հնչերանգը, տոնայնությունը վերարտադրելու, տարբեր մենախոսությունների և երկխոսությունների իմաստային և հնչերանգային դրսերումները հասկանալու համար: Դրա միջոցով լեզվակիրները և լեզուն ուսումնասիրողները հիմնականում առանձնացնում են թեման և ռեման, այսինքն՝ արտահայտության բուն տեղեկատվությունը:

Հետազոտության վերջին գլխում համապատասխան փորձարարական աշխատանքով հիմնավորվում է բնագրային ֆիլմերի հետ աշխատանքի արդյունավետ կաղապար, որ ներկայացնում է ֆիլմ-խոսութի հիմնական բաղադրամասերը և դրանց յուրացմանը միտված մեթոդների և հնարների համակարգը: Առաջարկվող ֆիլմերի միջոցով լեզվանյութի ուսուցման կաղապարը ներառում է դասընթացի կազմակերպման նախագիծը, դասերի պլանավորումը, ուսուցման ռազմավարությունները, մեթոդները, հնարները, միջոցները, ուսուցման միավորները /խոսքային, ոչ խոսքային շիման միջոցները/, բառապաշարը, քերականական նվազագույնը, հնչյունական կաղապարները, սկրիպտ և տրանսկրիպտը ներկայացնող տեքստերը, խոսույթները, մենախոսությունները, երկխոսությունները, խոսքի ընկալման և խոսքասերման համապատասխան ընթացակարգերը, նախաֆիլմային, ֆիլմային, հետֆիլմային վարժությունները, ուսուցման անձնակողմնորոշիչ և մեդիատեխնոլոգիաները:


Առաջարկվող կաղապարի արդյունավետությունը ստուգելու նպատակով իրականացվել է փորձարարական ուսուցում, որը տեղի է ունեցել 2010-2011 թթ: Փորձարարական աշխատանքի նպատակն է եղել հիմնավորել առաջարկվող կաղապարի արդյունավետությունը:

Փորձարարական խումբը բաղկացած է ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներից՝ 65 ուսանող, որից 33-ը՝ 3-րդ կուրսից և 32 –ը՝ 4-րդ

կուրսից: Համապատասխանաբար փորձարարական խմբում ընդգրկվել են 32 ուսանող, և ստուգողական խմբում՝ 33 ուսանող:

### (Գծապատկեր 1)

Բնագրային ֆիլմերի հետ աշխատանքի կաղապարը



Ըստ առաջարկվող կաղապարի, ուսանողները դիտում են երկու գեղարվեստական ֆիլմ առաջին կիսամյակում և երկու գեղարվեստական ֆիլմ երկրորդ կիսամյակում: Առաջին ֆիլմը նրանք դիտում են հայերեն կամ ռուսերեն ենթագրերով: Երկրորդ ֆիլմը նրանք դիտում են անգլերեն ենթագրերով: Երրորդ և չորրորդ ֆիլմերը նրանք դիտում են առանց ենթագրերի: Բնագրային ֆիլմերի հետ աշխատանքը ներառում է տարբեր առաջադրանքներ, վարժություններ՝ նախաֆիլմային /նախադիտման/, ֆիլմային /դիտման/ և հետֆիլմային /հետդիտման/:

Ուսուցման միջին և ավարտական փուլերում կիրառվում են ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ՝ ջիգսո մեթոդ, Վեճի դիագրամը, Պրիզմայի մեթոդ, բանավեճի, կինոկոնֆերանսի, Օսկարի մրցանակաբաշխության և այլ մեթոդներ: Սկզբունքային նշանակություն ունեն ֆիլմի տարբեր էպիզոդների քննարկումները և դրանց վերաբերադրումը: Քիչ կարևոր չեն նոր սցենար հորինելու և խաղարկելու վարժությունները:

Այսպիսով, փորձարարական ուսուցման նախնական և ավարտական փուլերում ստուգվել են ուսանողների հետևյալ կարողությունները և հմտությունները՝

1. առանձնացնել խոսակցական բառաշերտը ներկայացնող նոր բառերը և բառակապակցությունները,
2. ճանաչել և մեկնաբանել խոսակցական քերականական կառույցները,
3. ներկայացնել իրար հաջորդող գործողությունների մթնոլորտը, հերոսների հուզական աշխարհը՝ ըստ նրանց խոսքի հնչերանգի,
4. հասկանալ ֆիլմի հերոսների մենախոսությունը կամ երկխոսությունը՝ դիտելով ֆիլմն անգլերեն ենթագրերով,
5. հասկանալ ֆիլմի հերոսների մենախոսությունը կամ երկխոսությունը՝ դիտելով ֆիլմն առանց ենթագրերի,
6. կիրառել յուրացրած խոսքային կաղապարները սեփական խոսքի մեջ /մենախոսական կամ երկխոսական/,
7. սղագրել ֆիլմի սցենարը դիտման ընթացքում,
8. թարգմանել սղագրությունը ֆիլմի դիտումից հետո,
9. թարգմանել մենախոսությունը կամ երկխոսությունը ֆիլմի դիտման ընթացքում,
10. վերապատմել ֆիլմի առաջարկվող դրվագները,
11. առաջարկել ֆիլմի սեփական սցենարը:

**Լեզվամշակութային իրազեկության հիմքում ընկած ունակությունների զարգացումը  
փորձարարական և ստուգողական խմբերում**

**Փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքների ամփոփիչ աղյուսակ**

Բնագրային ֆիլմի հետ աշխատելու լեզվամշակութային կարողություններ և հմտություններ	Փորձարարական խումբ		Ստուգողական խումբ	
	N – 32		N – 33	
	Մինչև փորձը	Փորձից հետո	Մինչև փորձը	Փորձից հետո
1. առանձնացնել խոսակցական բառաշերտը ներկայացնող նոր բառերը և բառակապակցությունները	13	17	12	15
2. ճանաչել և մեկնաբանել խոսակցական քերականական կառույցները	12	17	11	14
3. ներկայացնել իրար հաջորդող գործողությունների մթնոլորտը, հերոսների հուզական աշխարհը՝ ըստ նրանց խոսքի հնչերանգի	12	16	12	14
4. հասկանալ ֆիլմի հերոսների մենախոսությունը կամ երկխոսությունը՝ դիտելով ֆիլմն անգլերեն ենթագրերով	9	16	9	13
5. հասկանալ ֆիլմի հերոսների մենախոսությունը կամ երկխոսությունը՝ դիտելով ֆիլմն առանց ենթագրերի	7	15	7	11
6. կիրառել յուրացրած խոսքային կաղապարները սեփական խոսքի մեջ /մենախոսական կամ երկխոսական/	9	15	10	12
7. սղագրել ֆիլմի սցենարը դիտման ընթացքում,	8	15	8	11
8. թարգմանել սղագրությունը ֆիլմի դիտումից հետո	11	16	10	13
9. թարգմանել մենախոսությունը կամ երկխոսությունը ֆիլմի դիտման ընթացքում	7	15	8	12
10. վերապատմել ֆիլմի առաջարկվող դրվագները	8	16	9	13
11. առաջարկել ֆիլմի սեփական սցենարը	7	14	7	9

Ստուգողական և փորձարարական խմբերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական ուսուցման վերջում փորձարարական խմբի ուսանողների ցույց տված արդյունքները բարձր են ստուգողական խմբի ուսանողների արդյունքներից:

Մեր հետազոտության շրջանակներում ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի մագիստրատուրայի անգլերենի բաժնում երեք ուսանող գրել են մագիստրական թեզ, որոնք վերաբերում են անգլերենի բառապաշտի, քերականության և զգացմունք արտահայտող բառերի և կիմետիկ միջոցների ուսուցմանը ֆիլմերի միջոցով։ Մեր կողմից առաջադրված շատ խնդիրներ քննարկվել են նրանց հետ և լուծվել համատեղ գիտափորձի ընթացքում։

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները հաստատեցին բնագրային ֆիլմերի միջոցով ուսանողների լեզվամշակութային իրազեկության զարգացման կաղապարը, որը ձևավորվել է հետազոտության տեսական նյութի հավաքման և գիտափորձի ընթացքում։

Ֆիլմերի դիտումը հնարավորություն է ընձեռում ընկալել և յուրացնել խոսքարկող հաղորդակցական կաղապարները՝ բառապաշտի, հնչյունաբանության և քերականության մակարդակներում։ Առաջադրանքների և ֆիլմերի ընտրությունը պայմանավորված է նրանով, թե լեզվի ինչ ասպեկտ է ուսուցանվում։

Անգլերենի մանագիտական դասընթացում բանավոր խոսքի ուսուցումը պահանջում է խոսքային և ոչ խոսքային միջոցների համակցված, համակարգված ուսուցում։ Խոսքային միջոցներից անհրաժեշտ է առանձնացնել այն հնչյունական, քերականական, բառային երևույթները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում գրական-խոսակցական, առօրյա-խոսակցական լեզվակաղապարների ուսուցման տեսանկյունից։ Բանավոր խոսքի ուսուցման շրջանակներում մեծ տեղ պետք է հատկացվի առօրյա խոսքին բնորոշ հնչերանգի, ձայներանգի, շեշտի, մեղեղայնության, առոգանության և այլ հնչյունական երևույթների ուսուցման վրա։

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հանրամշակութային, հանրալեզվաբանական, ընդհանուր առմանք հաղորդակցական իրազեկության ձևավորման նպատակով բնագրային ֆիլմերի ընտրությունը պետք է իրականացնել՝ հաշվի առնելով թե՛ ներուսումնական, թե՛ արտառուսումնական անգլերենի ուսուցման գործոնները, մասնավորապես ուսանողների գործարանական, հաղորդակցական իրազեկության մակարդակը, հետաքրքրությունները և իմացական, մասնագիտական, հեռանկարային պահանջմունքները, ուսուցման համար ընտրված բնագրային ֆիլմի

բովանդակությունը, լեզվակիրների մտածելակերպի, կենսակերպի, ընդհանուր առմամբ հոգեկերտվածքի առանձնահատկությունները:

2. Ֆիլմերը մի կողմից հետաքրքրություն են ներկայացնում լեզվաբանական հետազոտությունների տեսանկյունից, քանի որ հանդես են գալիս որպես տեքստ կամ խոսույթ: Մյուս կողմից՝ ֆիլմերը կարևորվում են ֆատիկ հաղորդակցության տեսանկյունից, քանի որ հանդես են գալիս որպես ոինամիկ, հարափոփոխ տեքստ:

3. Բնագրային ֆիլմերի միջոցով կարելի է վերստեղծել, մոդելավորել լեզվակիրների սոցիալականացման պայմանները և հնարավորինս արագ և արդյունավետ յուրացնել նրանց կողմից յուրացված սոցիալ-մշակութային, պատմական արժեքներն ու փորձը: Ընդ որում, այստեղ առաջին պլան են մղվում ֆիլմերում կիրառվող խոսքային և ոչ խոսքային հաղորդակցական միջոցները:

4. Անգլերեն բնագրային ֆիլմերը հետաքրքրություն են ներկայացնում թե՝ լեզվի, թե՝ մշակույթի ուսուցման տեսանկյունից, իսկ հայկական ֆիլմերի անգլերեն դիտումը հետաքրքրություն է ներակայացնում նախ և առաջ օտար լեզվի ուսուցման տեսանկյունից: Դա վերաբերում է նախ և առաջ բառապաշտին և հնչյունաբանությանը, քանի որ խոսակցական քերականական կառույցները հիմնականում թարգմանվում են համաձայն անգլերենի նորմատիվ քերականության:

5. Ուսուցողական նպատակներով բնագրային ֆիլմը որպես անգլերենի ուսուցման արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ, եթե ուսանողները կարողանան հասկանալ և վերլուծել այն որպես մեղիատեքստ և խոսույթ, որը ներկայացնում է ուսումնասիրվող լեզվի ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային կաղապարները:

6. Բնագրային ֆիլմերը հնարավորություն են ընձեռում յուրացնել խոսքարկող հաղորդակցության ռազմավարությունները խոսութային, գործաբանական նշույթների կիրառման առումով: Կասկած չկա, որ խոսութային նշույթների յուրացումը պահանջում է ընթերցանության, ունկնդրման, թարգմանության, բանավոր խոսքի յուրացման տարբեր ռազմավարությունների կիրառում:

7. Ֆիլմերի դիտումը արդյունավետ է թե՝ տեսական, թե՝ գործնական, թե՝ գրավոր, թե՝ բանավոր խոսքի զարգացման գործընթացում: Ուսուցման տարբեր փուլերում դրանք ուսանողների լեզվամշակութային իրազեկության ձևավորման և զարգացման կարևոր պայման են հանդիսանում:

8. Ֆիլմը հանդես է գալիս որպես խոսույթ կամ մեթախոսույթ, տեքստ կամ մեթատեքստ: Ըստ այդմ, այն ներկայանում է տարբեր ոճաժանրային մակարդակներում, և հաղորդակցական քերականական կառույցները

բացահայտվում են ֆիլմ-խոսույթի վերլուծության արդյունքում: Արտահայտության մակարդակում քերականական կառույցը վերլուծվում է մակերեսային, խորքային, շարահյուսական/իմաստաբանական մակարդակներում, իսկ խոսույթի մակարդակում շեշտադրվում է նշանաբանական հայեցակետը:

9. Ֆիլմի դիտումը նպաստում է վերարտադրողական հմտությունների ձևավորմանը և նախապատրաստում է սովորողներին արդյունավետ, տրամաբանական առումով հիմնավորված խոսք արտահայտելուն, եթե ֆիլմի դիտումը կրում է համակարգված բնույթ, հաշվի են առնված նրա հետ աշխատանքի լեզվամշակութային բնույթի գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման հիմնական ակտիվ, ինտերակտիվ մեթոդներն ու ընթացակարգերը:

10. Փորձարարական ուսուցման նախնական, միջին և ավարտական փուլերում հաստատվում է բնագրային ֆիլմերի միջոցով ուսանողների լեզվամշակութային իրազեկության ձևավորման և զարգացման համապարփակ համակարգ ստեղծելու և հետևողականորեն կիրառելու հիմնադրույթը:

### **Դետագուտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ իրապարակումներում.**

1. Մաթեսույան Թ. Պ., Կարապետյան Ի.Կ. «Գեղարվեստական ֆիլմերի միջոցով անգլերենի ուսուցման հիմնախնդիրը լեզվական բուհում», Մանկավարժություն 2010, N1, էջ 4-10:
2. Մաթեսույան Թ. Պ. «Անգլերեն ֆիլմերիմիջոցով հանրալեզվաբանական իրազեկության զարգացումը լեզվաբանական բուհում», Մանկավարժական Միտք- 1-2, 2010, էջ 70-73:
3. Մաթեսույան Թ. Պ. «Գեղարվեստական ֆիլմերի ընտրության սկզբունքներն անգլերենի մասնագիտական դասընթացում», Օտար լեզուները Հայաստանում, 2012 N3 , էջ 58-64:
4. Մաթեսույան Թ. Պ. «Անգլերեն խոսակցական լեզվի ուսուցման առանձնահատկությունները բնագրային ֆիլմերի միջոցով», Օտար լեզուները Հայաստանում, 2013, N3 , էջ 41-54:

## МАТЕВОСЯН ТАМАРА ПЕРЧОВНА

### РАЗВИТИЕ ЛИНГВО-КУЛЬТУРНОЙ КОМПЕТЕНЦИИ ПОСРЕДСТВОМ АУТЕНТИЧНЫХ ФИЛЬМОВ В ПРОФЕССИОНАЛЬНОМ КУРСЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (английский язык)”.

Защита диссертации состоится 25-го сентября 2014г. в 12<sup>00</sup>на заседании специализированного совета 020 ВАК “ Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

### РЕЗЮМЕ

**Актуальность исследования.** Аутентичные фильмы содержат богатый лингво-культурный материал. Неслучайно, что они используются в разных курсах по изучению иностранных языков. Они способствуют процессу усвоению языковых, а также вербальных и невербальных средств иноязычного общения.

В отечественной методике иностранных языков не разработаны соответствующие методики формирования и развития лингво-культурной компетенции у студентов факультета иностранных языков. В основном просмотр фильмов в учебных целях осуществляется без учета познавательных, профессиональных потребностей и интересов студентов факультета иностранных языков. Учебные и аутентичные фильмы отбираются по рассмотрению преподавателей. Просмотр фильмов осуществляется без заранее разработанной программы. В существующих программах не обоснована необходимость просмотра фильмов в учебных целях.

Фактически цели и задачи учебных и аутентичных фильмов в профессиональном курсе английского языка последовательно и систематично не уточняются, исходя из особенностей развития основных видов иноязычной речевой деятельности вообще, и лингво-культурной компетенции в частности. Этим и обосновывается актуальность данного исследования.

**Целью исследования** является развитие лингво-культурной компетенции студентов факультета иностранных языков на основе аутентичных фильмов.

#### **Задачи исследования:**

- Изучить учебно-методическую литературу по обучению иностранным языкам посредством аутентичных фильмов.
- Представить содержательные и функциональные характеристики лингво-культурной компетенции, с учетом уровня обучения иностранным языкам на факультете иностранных языков и профессиональных, познавательных потребностей студентов.
- Выявить особенности преодоления фонетической, лексической, грамматической, а также социально-культурной интерференции посредством аутентичных фильмов.
- Разработать методическую систему развития лингво-культурной компетенции с использованием аутентичных фильмов в учебных целях.

**Научная новизна исследования:**

1. Выявлены особенности формирования лингво-культурной компетенции у студентов факультета иностранных языков в учебных и внеучебных условиях на основе аутентичных фильмов,
2. разработана методическая система формирования культуры просмотра иноязычных аутентичных фильмов в учебных целях, усвоения речевых моделей содержащих в них, развития лингво-культурной и коммуникативной компетенции студентов факультета иностранных языков,
3. рассмотрено формирование лингвокультурной компетенции как существенный компонент коммуникативной компетенции и текущей, завершающей проверкой результатов опытного обучения подтверждена эффективность предложенной модели,
4. разработана стратегия преодоления посредством аутентичных фильмов лексической, грамматической и фонетической, а также культурной и прагматической компетенции, которая становится важным условием формирования и развития лингвокультурной компетенции.

**Теоретическое значение исследования:**

- Изучены современные методологические и методические подходы к эффективному использованию технических, телекоммуникационных средств в учебных целях.
- Выявлены особенности использования аутентичных, в основном художественных фильмов в учебных целях.
- Конкретизированы языковые и стилистические особенности сценариев аутентичных фильмов, обоснованы принципы отбора лексического минимума, необходимого для понимания аутентичных фильмов и использования в активной речи.
- Разработана система упражнений по формированию и развитию лингво-культурной компетенции посредством аутентичных фильмов в учебных целях, направленная на обучение и усвоение национально-маркированной лексики.

**Практическое значение исследования:**

Разработана посредством организации работы над аутентичными фильмами методическая система развития лингво-культурной компетенции, которая включает допросмотровые, просмотрные и послепросмотровые упражнения и технологии обучения профессиональному английскому языку. Разработанная методическая система может способствовать созданию учебников, учебных пособий, планов и проведению конкретных уроков.

**Апробация результатов исследования:**

Основные положения результатов исследования обсуждались на заседаниях кафедры методики преподавания иностранных языков в АГПУ им. Х. Абовяна. Результаты исследования были апробированы на факультете иностранных языков в АГПУ им. Х. Абовяна и в АПИ им М. Налбандяна.

**Содержание исследования** отражено в структуре диссертации, которая состоит из 2 глав, введения, заключения, библиографии и приложений.

## MATEVOSYAN TAMARA PERCH

### THE DEVELOPMENT OF LINGUO-CULTURAL COMPETENCE THROGH AUTHENTIC FILMS IN THE PROFESSIONAL COURSE OF ENGLISH

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Methods of teaching and education" (English language).

The defense of the thesis will be held at 12<sup>00</sup> on September 25, 2014 at the session of the Special Board 020 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: 0010, st.Tigrana Mets 17, Yerevan.

#### SUMMARY

##### **The relevance of the research.**

Authentic films contain rich linguistic and cultural material. It is logical that they are used in various foreign language courses. They contribute to the process of language acquisition, as well as verbal and nonverbal means of foreign language communication.

In the paternal tradition of teaching foreign languages the appropriate methods for forming and developing linguistic and cultural competence of the students at the Faculty of Foreign Languages are not developed. Basically viewing movies for academic purposes is carried out without consideration of cognitive, professional needs and interests of the students of the Faculty of Foreign Languages.

In fact, the goals and objectives of academic and authentic films in the professional English course are not systematically specified, based on the characteristics of the main types of foreign-language speech activity in general, and linguistic and cultural competence in particular. These statements substantiate the vitality of the present research.

**The aim of this research** is to study the modern pedagogical and linguodidactic conditions of linguistic and cultural competence of students through viewing authentic films at the Faculty of Foreign Languages.

##### **Objectives of the research.**

- Examine the methodological literature on teaching foreign languages through authentic films.
- Provide content and functional characteristics of linguistic and cultural competence, taking into consideration the level of foreign language teaching at the Faculty of Foreign Languages and professional and educational needs of students.
- Identify the peculiarities of preventing and overcoming of phonetic, lexical, grammatical, and socio-cultural interference by demonstrating authentic films for teaching purposes.

- Develop the methodological system of linguistic and cultural competence using authentic films for teaching/learning purposes.

**Scientific novelty of the research.**

1. It reveals the peculiarities forming linguistic and cultural competence of students at the Faculty of Foreign Languages in curricular and extracurricular conditions by viewing authentic films,
2. develops methodological system of building a culture of watching foreign language authentic films for teaching purposes, mastering speech patterns,
3. considers the process of forming linguo-cultural competence as an essential component of communicative competence and through current and final testing of the results of experimental teaching the effectiveness of the proposed model is confirmed,
4. works out the strategy of overcoming lexical, grammatical, phonetic, as well as culture and pragmatic interference which is becoming an important condition of building and developing linguo-cultural competence.

**The theoretical significance of the research.** The research studies the modern and methodological approaches to the effective use of technology, telecommunicative means for teaching purposes and reveals the peculiarities of using authentic mainly feature films for teaching purposes. It specifies the linguistic and stylistic features of the scripts of authentic films, justifies the principles of selection of the lexical minimum which is necessary for understanding authentic films and using it in productive speech.

It develops the system of exercises for forming and developing linguistic and cultural competence, using authentic films for teaching purposes aimed at teaching and assimilating nationally-marked words.

**The practical significance of the research.** It develops through organizing the work on authentic films, the methodological system of developing linguistic and cultural competence of students at the Faculty of Foreign Languages, which presents pre-viewing, viewing and post-viewing exercises and learning technology of teaching professional English. The developed methodological system can contribute to the creation of textbooks, manuals, plans and implementation of specific lessons.

**Reliability and validity of the survey results.** The main provisions of the results of the study were discussed at the Department of Foreign Language Teaching Methodology in ASPU after Kh. Abovyan. The results of the research were piloted and tested at the Faculty of Foreign Languages in ASPU after Kh. Abovyan and ASPI after M. Nalbandyan.

**The structure of the research** is reflected in the structure of the dissertation, which consists of two chapters, introduction, conclusion, bibliography and appendices.